



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՐԵՄՍԵԱՆ ՄԵՐ ԹԵՄԸ ՄԵԾ ՈԳԵՒՐՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՈՒՎՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ



Ի հետևումն Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան մեր Թեմին շնորհելիք Հովուապետական այցելութեան մասին մեր անդրանիկ հաղորդագրութեան, այսու գոհունակ սրտով մեր հաւատացեալ ժողովուրդին կը յայտնենք, թէ Նորին Ս. Օծութեան այցելութիւնը տեղի պիտի ունենայ Ծէն 23 Հոկտեմբերին:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի գլխաւորութեամբ, Ազգային Կեդրոնական Վարչութեան երկու անդամները, Կրօնական Ժողովն ու Ազգային Վարչութիւնը ձեռնարկած են Հովուապետական այցելութեան

ժամանակացոյցի ճշդումին, եւ այդ նպատակով, կեանքի կոչած են շարք մը յանձնախումբեր՝ **Վեհափառի ընդունելութեան Գործադիր Մարմինը, Ճաշկերոյթի Յանձնախումբը, Յարաբերական Աշխատանքներու եւ Մամուլի Յանձնախումբը, Դպրեվանքին ի նպաստ ձեռնարկի Յանձնախումբը, եւ Ազգային վարժարաններուն ի նպաստ Հանգանակային Յանձնախումբը:**

Հովուապետական այցելութիւնը պաշտօնապէս պիտի սկսի Հինգշաբթի, 6 Հոկտեմբերին, երեկոյեան ժամը 6ին, Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ, ժողովրդային դիմաւորութեամբ եւ աջահամբոյրով:

Կիրակի, 16 Հոկտեմբերին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ Վեհափառ Հայրապետը Ս. եւ անմահ Պատարագ պիտի մատուցանէ եւ

պիտի փոխանցէ հայրապետական իր պատգամը: Իսկ նոյն օրը, երեկոյեան տեղի պիտի ունենայ ի պատիւ Նորին Ս. Օծութեան, Մեծարանքի Գլխաւոր ճաշկերոյթը, Universal Hilton պանդոկի շքեղ սրահներուն մէջ:

Վեհափառ Հայրապետը այցելութիւններ պիտի շնորհէ Հարաւային Զալիֆորնիոյ մեր Թեմի ծխական շրջաններու եկեղեցիներուն, ինչպէս նաեւ Ֆրեզնոյի, Սան Ֆրանսիսքոյի եւ Լաս Վեկասի համայնքներուն: Յայտնենք, որ Նորին Ս. Օծութեան Հոգևորապետական այցելութեան օրերուն, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարը պիտի տօնէ իր հիմնադրութեան 90ամեակը, Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին՝ իր 45ամեակը, իսկ Լաս Վեկասի մէջ կառուցուող Ս. Կարապետ եկեղեցին պիտի ունենայ Վեհափառ Հայրապետին օրհնութիւնն ու գմբեթի խաչին օծումը:

Հոգևորապետական այցելութիւնը կը նպատակադրէ **առաւել զարկ տալ հոգևոր կեանքի վերանորոգման, Հայ Դպրոցի վերածաղկման ու ամրացման, եւ Ազգային պահանջատիրութեան հզօրացման**, ինչպէս նաեւ նշում՝ Հայ Մանուկի տարուան: Նախատեսուած են նաեւ աշակերտներու եւ երիտասարդներու հետ հանդիպումներ, Դպրեվանքին նուիրուած ու դասախօսական ձեռնարկներ եւ պաշտօնական անձնաւորութիւններու հետ հանդիպումներ: Այս բոլորին համար, նախապատրաստական աշխատանքները ընթացքի մէջ են:

Վստահ ենք, որ մեր համայնքի հաւատացեալներուն, Առաջնորդարանիս բարեկամներուն ու բարերարներուն միացեալ ճիգերով եւ քաջալերանքով, Հոգևորապետական այս այցելութիւնը պիտի վերածենք պատմական առիթի:

Այցելութեան ժամանակացոյցին ամբողջական մանրամասնութիւնները կը հաղորդենք շուտով:

## WESTERN PRELACY ENTHUSIASTICALLY PREPARES FOR THE PONTIFICAL VISIT OF H.H. CATHOLICOS ARAM I



H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Religious and Executive Councils hereby announce with great joy the tentative schedule of the Pontifical visit of His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia, to the Western Prelacy of the Armenian Apostolic Church of America.

The Pontifical Visit will begin on Thursday, October 6, 2011, and conclude on October 23.

Under the direction of the Prelate, the two Central Executive

Council members together with the Prelacy Religious and Executive Councils formed a number of committees to oversee the planning of the Pontifical Visit, and preparations are well under way. The Pontifical Visit Steering, Banquet, Public Relations, Seminary, and School Fundraising Committees have already assumed their responsibilities and are working diligently to ensure a successful and memorable Pontifical visit.

The Pontifical Visit will officially commence on Thursday, October 6 at 6:00 p.m. with a community-wide welcoming at St. Garabed Church in Hollywood.

On Sunday, October 16, His Holiness will celebrate Divine Liturgy at St. Mary's Church in Glendale. The Pontifical Banquet in honor of His Holiness will be held on the evening of the 16<sup>th</sup> at the Universal Hilton Hotel.

His Holiness will visit our Southern California Churches, as well as our Churches and Parishes in Fresno, San Francisco, and Las Vegas. His Holiness will celebrate with our communities such milestone as the 90<sup>th</sup> anniversary of Holy Cross Cathedral, the 45<sup>th</sup> anniversary of St. Gregory Church, and will consecrate the dome cross of St. Garabed Church of Las Vegas.

The Pontifical Visit of His Holiness will focus on **spiritual renewal**, the **further anchoring and continued progress of Armenian schools**, **reassertion of our spirit of national aspirations**, and events dedicated to the **"Year of the Armenian Child"** and the **Seminary of the Holy See of Cilicia**. The Pontifical Visit will also encompass meetings with students and young adults, a series of lectures, meetings with officials and dignitaries, and much more.

We are confident that with joint efforts and the support and encouragement of our sponsors, friends, and community, this much-anticipated Pontifical Visit will be a historic one.

Further details of the Pontifical Visit schedule will be reported in due time.

\*\*\*

## **ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՒՅ ՄԷՉ**

Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, այս Կիրակի, 24 Յուլիսը, Բարեկենդան Վարդավառի Պահոց Է:

Հրաւերովը Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Խորէն Աւ. Զիւլ. Հապէշեանի եւ եկեղեցւոյ Հոգաբարձութեան, Կիրակի, 24 Յուլիսին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցէ, սարկաւագաց ձեռնադրութիւն պիտի կատարէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը պիտի փոխանցէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Պատարագի աւարտին, այս առիթով ընդունելութիւն մը տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ »Վասպուրական« սրահին մէջ որուն ներկայ պիտի ըլլայ

Առաջնորդ Սրբազանը: Աւելի ուշ, ան հանդիպում պիտի ունենայ  
Հոգաբարձութեան եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի Սան  
Ֆրանսիսքո այցելութեան հիւրընկալ յանձնախումբին հետ:

## **PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AND ORDAIN DEACONS AT ST. GREGORY CHURCH IN SAN FRANCISCO**

Sunday, July 24<sup>th</sup> is the eve of the Fast of Transfiguration.

By the invitation of Archpriest Fr. Khoren Habeshian, Pastor, and the Board of Trustees of St. Gregory Church of San Francisco, on Sunday, July 24<sup>th</sup>, 2011 H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at St. Gregory Church. During the service, the Prelate will also ordain two deacons.

At the conclusion of the service, a reception will be held at the Church Vasbouragan Hall on the occasion of the Prelate's visit.

Later in the day, the Prelate will meet with the Pastor, Board of Trustees, and the local Pontifical Visit committee to discuss preparations for the upcoming visit.

\*\*\*

### **ՀՈԳԵՅԱՆԳԻՍՏ Տ. ՍՄԲԱՏ ԱՐՔ. ԼԱՓԱՃԵԱՆԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ Ա. ՏԱՐԵԼԻԳԻՆ ԱՌԻԹՈՎ**



Հոգելոյս Տ. Սմբատ  
Արք. Լափաճեանի  
վախճանման Ա. տարելիցին  
առիթով, Կիրակի, 17  
Յուլիսին, Թեմիս  
բարեխնամ Առաջնորդ  
Բարձր. Տ. Մուշեղ Արք.  
Մարտիրոսեան  
Նախագահեց Ս. Խաչ Մայր  
Տաճարի Ս. Պատարագին,  
Ներկայ  
հաւատացեալներուն  
ուղղեց իր պատգամս ու

յաւարտ Ս. Պատարագի՝ Նախագահեց հոգեհանգստեան արարողութեան:  
Հոգեհանգիստը տեղի ունեցաւ հոգելոյս Սրբազանին շիրիմին առջեւ:

Պատարագիչն էր Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Նարեկ  
Ա. Զինյ. Փեղիվանեան: Ներկայ էին Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապազեան,  
Ազգային Վարչութեան անդամներէն Տիար Վահան Պզտիկեան, Ազգ.  
Երեսփոխանական Ժողովի անդամներ, Մայր Տաճարի հոգաբարձութեան եւ  
Տիկնանց Միութեան անդամներ, հայկական կազմակերպութեանց ու քոյր

միութեանց ներկայացուցիչներ, որոնք եկած էին յարգելու հոգելոյս Սրբազանին յիշատակը:

Իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը կանգ առաւ վախճանեալ Սրբազանին կեանքի իրագործումներուն ու անոնցմէ բխող յիշատակներուն առջեւ. «Արդէն տարի մը անցած է այն օրէն, երբ Սմբատ Սրբազանը երկրաւոր այս կեանքին հրաժեշտ տուաւ, սակայն իր յիշատակները վառ կը մնան բոլորիս մօտ. հոգելոյս Սրբազանը երախտաշատ հոգեւորական մըն էր ու հաւատարիմ ծառան Աստուծոյ, մեր եկեղեցւոյ եւ ազգին. ահա թէ ինչո՞ւ կը փնտռենք իր ներկայութիւնը», ըսաւ Առաջնորդ Սրբազանը, ու հոգելոյս Սրբազանին կեանքի ծառայութիւնները նմանցնելով Ս. Գրային օրուան ընթերցումին Որոմի առակին մէջ նշուած լաւ սերմեր ցանող մարդուն՝ յիշեցուց, որ ան բազմաթիւ բարի սերմեր ցանած էր իր կեանքի ընթացքին, քաջ գիտնալով, որ այսօր ցանուածը վաղը պիտի ծաղկի ու բերքաւորուի: «Իբրեւ բարի հովիւ ու սերմնացան, ան Աստուծոյ սերը, Աստուծոյ խօսքն ու հաւատքի սերմեր ցանեց իր հօտի սիրտերուն ու միտքերուն մէջ, վստահ ըլլալով, որ բարի սերմերը պիտի ծլարձակուին եւ վաղուան հունձքը կախում ունի այսօրուան ցանուածէն: Սմբատ Սրբազանը սերունդներ դաստիարակեց, լուսաւորեց սիրտեր ու միտքեր, ներշնչում տուաւ սերունդներու, եւ մենք այսօր կը շարունակենք քաղել իր ցանած սերմերուն բարի պտուղները», ըսաւ Առաջնորդ Սրբազանը: Ան այս առիթով աղօթք բարձրացուց առ Աստուած, որպէսզի վախճանեալ Սրբազանի հոգւոյն պարգեւէ յաւիտենական հանգիստ ու զայն դասէ արդարներու շարքին:

Եկեղեցական արարողութիւններէն ետք, Տաճարին կից «Բաղրամեան» սրահին մէջ տեղի ունեցաւ հոգեճաշ, հիւրընկալութեամբ եկեղեցւոյ Զովիւներուն, հոգաբարձութեան եւ Տիկնանց միութեան: Ներկաները ոգեկոչեցին վախճանեալ Սրբազանին յիշատակը:

## REQUEIM SERVICE ON THE ONE YEAR ANNIVERSARY OF THE PASSING OF ARCHBISHOP SUMBAT LAPAJIAN



gravesite of the late Archbishop.

On Sunday, July 17<sup>th</sup>, 2011, the one year anniversary of the passing of Archbishop Sumbat Lapajian was observed at Holy Cross Cathedral in Montebello. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Divine Liturgy, delivered the sermon and presided over the requiem service which was held in the Church courtyard at the

Divine Liturgy was celebrated by Archpriest Fr. Nareg Pehlivanian.

Among those in attendance to honor the memory of Archbishop Sumbat Lapajian were H.E. Archbishop Yeprem Tabakian, Executive Council member Mr. Vahan Bezdikian, Parish Delegates, Board of Trustees and Ladies Guild members, and representatives of sister organizations.

During his sermon, the Prelate reflected on the life and works of Archbishop Lapajian stating, "A year has passed since we lost this remarkable man and clergyman but his absence is still being felt, which is a testament to how much he was loved and admired by our community". Tying in the day's Scripture reading to the anniversary of Archbishop Lapajian's passing, the Prelate said, "It is fitting that the day's Gospel reading is the Parable of the Tares, for those who knew Archbishop Lapajian can liken him to the man in the parable who planted good seeds in his field. He was indeed a good shepherd and a good laborer for our Lord. Knowing well that the harvest of tomorrow depends on the seeds one sows today, he planted the seeds of God's love, of God's word, and of faith into the hearts, minds, and souls of his flock so that they would hear the Word, accept it, and bear fruit. It is said if you plant the seeds of God's Word in your heart and speak it out of your mouth, it will produce life for you. By doing just that, Archbishop Lapajian educated, enlightened, and inspired generations, and today we continue to reap the plentiful harvest of the seeds he planted long ago." The Prelate concluded his message by praying for Archbishop Lapajian's soul to rest in peace in the glory and the kingdom of our Lord Almighty.

A memorial luncheon followed at "Bagramian" Hall hosted by the parish Pastors, Board of Trustees, and Ladies Guild, during which the life and memory of Archbishop Lapajian was honored.

\*\*\*

## **ԹԵՄԻՍ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Կ'ՈՂՋՈՒՆԷ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ**

Չորեքշաբթի, 20 Յուլիսին, Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան Արտաքին յարաբերութեանց յանձնախումբը, մէկի դէմ 43 քուէով, որդեգրեց բանաձեւ մը, որ Թուրքիայէն կը պահանջէ քրիստոնեայ համայնքներուն վերադարձնել անոնցմէ խլուած եկեղեցիները եւ վերջ տայ քրիստոնեայ փոքրամասնութեանց դէմ ճնշումի իր վարմունքին:

Շաբաթասկիզբին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեան կոչեր ուղղած էին ամերիկահայութեան, որպէսզի ներկայացուցիչներու հետ հաղորդակցութիւններ հաստատելով, պահանջէին այս բանաձեւին որդեգրումը: Հայ Դատի գրասենեակէն արձակուած կոչին ընդառաջող այս արշաւը արդարացուց ի գործ դրուած ճիգը:

«Խորապէս ուրախ եմք քուէարկութեան արդիւնքին համար, շնորհակալութիւն՝ Ներկայացուցիչներու տան Արտաքին յարաբերութեան յանձնախումբի անդամներուն: Կը յուսանք, որ Ներկայացուցիչներու Տունը եւս որդեգրէ որոշումը. կ'աղօթենք, որ շուտով հասնի այն օրը, երբ Թուրքիոյ տարածքին մեր դարաւոր եկեղեցիներու սրբապղծումը, կործանումը վերջ գտնեն եւ քրիստոնէայ փոքրամասնութեանց դէմ հալածանքները դադրին», յայտարարեց Առաջնորդ Սրբազանը, Չորեքշաբթիի քուէարկութենէն ետք: Ան նաեւ բարձր գնահատեց Հայ Դատի յանձնախումբին անդուլ ճիգերը, որոնք ի գործ կը դրուին հայութեան զաւակներուն իրաւատիրութիւն շամբելու եւ զանոնք նման աշխատանքներու լծելու համար:

## **PRELATE SALUTES HOUSE FOREIGN AFFAIRS COMMITTEE VOTE CALLING ON TURKEY TO RETURN CHURCHES**

On Wednesday, July 20, the House Foreign Affairs Committee by a vote of 43 to 1 adopted an amendment calling on Turkey to return stolen churches and end oppression of its Christian minorities.

Earlier in the week, Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, had called on Armenian communities throughout the United States to contact their representatives in Congress and urge them to support this amendment. The call to action, alerts by the ANCA, and phone calls by thousands of Armenian across the U.S. paid off on Wednesday with this crucial vote.

"We are overcome with joy at this bold decision by the House Foreign Affairs Committee and extend our profound thanks and gratitude to the Committee members. We are hopeful for a similar outcome on the floor of the House of Representatives, and pray for the day when the desecration and destruction of our sacred churches and heritage and the persecution of Christian minorities in Turkey is put to an end. We express thanks and appreciation also to the Armenian National Committee for their relentless efforts in educating and mobilizing the community", said the Prelate after Wednesday's vote.

\*\*\*